DOI: 10.59560/18291155-2025.3-155

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերություն,
ԲՇՊ բաժնի իրավաբան,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետ,
մագիստրատուրայի ուսանող,
Քրեական արդարադատություն և
փաստաբանություն, 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ***Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ***
Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԻՔ

Ամփոփագիր

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ քրեական դատավարության որոշ ինստիտուտներ ենթարկվել են մի շարք էական փոփոխությունների, որոնք ոլորտի հասարակական հարաբերությունների և օրենսդրության կատարելագործման արդյունք էին: Քրեական հետապնդման ինստիտուտը ևս փոփոխությունների է ենթարկվել: Օրենսդիրն ամրագրել է քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելը, ինչպես նաև քրեական հետապնդումը նորոգելը, որոնք հայրենական քրեական դատավարական օրենսդրության մեջ նորույթ են: Օրենսդրության մեջ առաջին անգամ սահմանվեցին քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ՝ կախված տվյալ քննվող հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից: Սույն աշխատության մեջ մանրամասն ուսումնասիրվել են քրեական հետապնդման ժամկետները՝ որպես մեղադրյալի ողջամիտ ժամկետի երաշխիք: Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում վեր են հանվել իրավակիրառ պրակտիկայում առաջացող հիմնախնդիրներ և դրանցից բխող առաջարկներ են կատարվել՝ օրենսդրական բացերը լրացնելու համար:

Պրակտիկայում առաջանում է այնպիսի խնդիր, որ փաստացի առկա է լինում քրեական հետապնդում, սակայն քրեական հետապնդման քրեադատավարական ժամկետների ընթացքն ավելի ուշ սկսվելու նպատակով մեղադրանք չի առաջադրվում, այսինքն քրեական հետապնդում չի հարուցվում: Վերոնշյալ խնդրի լուծման համար առաջարկել ենք, որ եթե անձի նկատմամբ փաստացի առկա է քրեական հետապնդում, ապա ժամկետների հաշվարկը սկսվի փաստացի կասկածի օրվանից:

Հիմնաբառեր. քրեական հետապնդում, քրեական հետապնդման ժամկետներ, ողջամիտ ժամկետ, մեղադրյալ, քրեական հետապնդման դադարեցում, դատախազ, քրեական վարույթ:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդիր մարմինը, ընդունելով Քրեական դատավարության նոր օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), էական փոփոխությունների է ենթարկել քրեադատավարական մի շարք ինստիտուտներ, որոնք ուղղված են քրեական գործերով վարույթի կատարելագործմանը, պրակտիկայում նախկինում առաջացած խնդիրների լուծմանը, առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև համապատասխանեցվել է միջազգային իրավական չափանիշներին: Օրենսգիրքը հիմնվել է ՀՀ վճռաբեկ դատարանի ու Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև առաջադեմ միջազգային փորձի վրա:

Պետք է նշենք, որ օրենսդրության կատարելագործումն ինքնին կարևոր քայլ է, սակայն մի կողմից այլ հարց է իրավական նորմերի, դրանց իրացման մեխանիզմների ամրագրումը, մյուս կողմից՝ այդ նորմերի իրացումը պրակտիկայում: Ուստի՝ այստեղ կարող են առաջանալ որոշ հիմնախնդիրներ, որոնց կարող են առնչվել իրավակիրառողներն իրենց գործունեության ընթացքում:

Օրենսգրքի ընդունմամբ էական փոփոխությունների է ենթարկվել նաև քրեական հետապնդման ինստիտուտը: Քրեական հետապնդման իրավահարաբերությունների շարքում, ի տարբերություն նախկին իրավակարգավորումների, օրենսդիրն ամրագրել է քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելը, ինչպես նաև քրեական հետապնդումը նորոգելը[1]: Հիմնվելով Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված՝

[1] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=200673 , հոդված 192-198:

քրեական հետապնդում հարուցելու բացառիկ իրավունքի վրա[1], օրենսդիրը դատախազին է վերապահել նաև քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու լիազորությունը, այսինքն՝ մինչդատական վարույթում քրեական հետապնդման տնօրինումը դատախազի բացառիկ իրավասությունն է: Որպես դատախազության անկախ գործառույթ՝ քրեական հետապնդումը քրեական դատավարությանը դատախազի մասնակցության հիմնական ուղղությունն է, որը բաղկացած է դատավարական գործողություններից:

Քրեական հետապնդումը հարուցվում է կոնկրետ անձի նկատմամբ (in personam)[2]: Քրեական հետապնդման հարուցումը **դատախազի** կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելն է:

Հայրենական դատավարական օրենսդրության շրջանակներում առաջին անգամ սահմանվեցին քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ՝ կախված տվյալ քննվող հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից: Նման իրավակարգավորման նախատեսումը նշանակալի քայլ է վարույթի ողջամիտ ժամկետի, հետևաբար նաև՝ դատավարության մասնավոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից: Վարույթի ողջամիտ ժամկետի պահպանմանն ուղղված դրույթ օրենսդիրը նախատեսել է քրեադատավարական սկզբունքի մակարդակով[3]: Նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել **պատշաճ ջանասիրություն վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար**: Մեղադրյալն ունի **ողջամիտ ժամկետում** դատարանի առջև կանգնելու իրավունք: Անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի **ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով**: Վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակներում գործելիս առաջնորդվել ինչպես քրեական դատավարության վերոնշյալ, այնպես էլ մյուս սկզբունքներով: Օրենսգիրքը հստակ սահմանել է ժամկետային սահմանափակումներ՝ ելնելով մեղսագրվող արարքի

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն: Երևան 2015, https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723 , 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ:

[2] Տե՛ս **Ղամբարյան Ա.Ս.**, Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): ՀՀ Քննչական կոմիտե, 2016, էջ 29:

[3] Տե՛ս Օրենսգրքի 24-րդ հոդված:

(հանցագործության) ծանրության աստիճանից[1]: Համաձայն Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

1. 3 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
2. 5 ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
3. 8 ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
4. 10 ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով:

Կարծում ենք, որ քրեական հետապնդման ժամկետների սահմանումն արդարացված է, քանի որ քրեական վարույթի ընթացքում կարող են սահմանափակվել մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները, որոշ դեպքերում՝ տևական ժամանակով: Ընդ որում, ժամկետներ սահմանելով՝ օրենսդիրը մի կողմից երաշխիք է ստեղծել մեղադրյալի համար, որպեսզի նրա իրավունքներն ու ազատությունները կամայականորեն չսահմանափակվեն երկար ժամանակով, իսկ մյուս կողմից մեխանիզմ է ստեղծել, որ վարույթն իրականացնող մարմինը գործի բարեխղճորեն և դրսևորի պատշաճ ջանասիրություն: Ժամկետների սահմանումը կարևորվում է նաև նրանով, որ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե քրեական հետապնդման առավելագույն ժամկետը լրացել է, և դրա ընթացքում դատախազի կողմից վարույթի նյութերը դատարանին չեն հանձնվել[2]: Ընդ որում, այդ հիմքը դասվում է քրեական հետապնդումը դադարեցնելու արդարացնող հիմքերի թվին՝ բացառելով արդարացման ենթակա դեպքերում վարույթը արհեստականորեն ձգձգելու միջոցով քրեական հետապնդումը ժամկետի հիմքով դադարեցնելու՝ քրեական հետապնդման մարմինների մոտիվացիան:

Քրեական գործերով վարույթների քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն ուղղված օրենսդրական նման կարգավորումը բխում է վարույթի ողջամիտ ժամկետի քրեադատավարական սկզբունքից: Սակայն պետք է նշենք, որ քրեական հետապնդման ժամկետների կարգավորումը բացառապես հանցագործության դասակարգման հիման վրա միանշանակ չէ և ոչ բոլոր դեպքերում է կարող նպաստել կոնկրետ գործով ողջամիտ ժամկետի պահպանմանը: Բացի այդ՝ բացառված չեն դեպքեր, երբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների ժամանակ պահանջվեն ավելի երկար ժամկետներ, սակայն վարույթն իրականացնող մարմինները կաշկանդված լինեն վերոնշյալ ժամկետներով:

[1] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 1-ին մաս:
[2] Տե՛ս նույն տեղում, 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ:

Օրենսդիրը նախատեսել է նաև քրեական հետապնդման ժամկետների երկարաձգման հնարավորությունը, սակայն միայն բացառիկ դեպքերում, և երբ դա է պահանջում արդարադատության շահը[1]: Վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու **ոչ մեծ կամ միջին** ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով հանրային քրեական հետապնդման ժամկետները՝ **առավելագույնը մեկ ամսով**, իսկ **ծանր կամ առանձնապես ծանր** հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետները՝ **առավելագույնը երկու ամսով**: Այն դեպքում, երբ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցված տարբեր ծանրության մեկից ավելի հանցանքների համար, ապա կիրառվում է առավել ծանր հանցանքի համար Օրենսգրքով սահմանված ժամկետը[2]:

Մեղադրյալի համար ևս մեկ իրավական երաշխիք է ստեղծվել ավելի ծանր հանցանքի (հանցանքների) համար հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու, կամ նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխվելու դեպքում[3]: Այս դեպքում կիրառվում է այն հանցանքի (հանցանքների) համար՝ Օրենսգրքով սահմանված ժամկետը, որով (որոնցով) հանրային քրեական հետապնդումը շարունակվում է: Այդ ժամկետը լրացած կամ մեկ ամսից պակաս լինելու դեպքում քրեական հետապնդումը չի կարող տևել ավելի, քան մեկ ամիս: Օրենսդիրը իրավական երաշխիք է նախատեսել վերոնշյալ նորմով, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը կամայականորեն չգործի և չկարողանա հաղթահարել քրեական հետապնդման ժամկետը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արարքի իրավական գնահատականի փոփոխման միջոցով: Օրինակ՝ մեղադրյալի նկատմամբ ծանր հանցանքով 6 ամիս քրեական հետապնդում իրականացնելուց հետո, եթե նրան վերագրվող արարքի նոր որակման արդյունքում այն առանձնապես ծանր հանցագործություն է, ապա այն կարող է տևել 4 ամիս, իսկ նույն օրինակում 7 ամիս քրեական հետապնդում իրականացնելուց հետո՝ այն չի կարող տևել 1 ամսից ավել: Օրենսգրքով սահմանված ժամկետներն ընդհատվում են քրեական հետապնդումը դադարեցնելու պահից և շարունակվում են քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու կամ քրեական հետապնդումը նորոգելու դեպքում:

[1] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 2-րդ մաս:
[2] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 3-րդ մաս:
[3] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 4-րդ մաս:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելը կարող է տեղի ունենալ ինչպես անորոշ ժամանակահատվածով, այնպես էլ հստակ սահմանված ժամկետներով: Քրեական հետապնդման ժամկետը կասեցված է համարվում քննիչի միջնորդության հիման վրա հսկող դատախազի կողմից որոշում կայացնելու պահից: Համաձայն Օրենսգրքի 193-րդ հոդվածի՝ քրեական հետապնդման ժամկետների կասեցման հիմք են հանդիսանում՝

1. քննությունից խուսափելու կամ այլ պատճառներով մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ է,

2. մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով զրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից,

3. մեղադրյալը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով չի կարող մասնակցել վարույթին,

4. մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր,

5. գործում է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է վարույթի հետագա իրականացմանը[1]:

Եթե առանց նշանակված փորձաքննության եզրակացությունը կամ առանց քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը ստանալու հնարավոր չէ լուծել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու կամ այն դադարեցնելու հարցը, ապա յուրաքանչյուր դեպքում քրեական հետապնդման ժամկետը՝

1. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով կարող է կասեցվել 2 ամսից ոչ ավելի,

2. ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով՝ 4 ամսից ոչ ավելի ժամկետով:

Ամեն դեպքում, սույն մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման կասեցման ընդհանուր ժամկետը նույն մեղադրյալի նկատմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով չի կարող գերազանցել Օրենսգրքի 192-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդման առավելագույն ժամկետները, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով՝ նույն հոդվածով նախատեսված քրեական հետապնդման առավելագույն ժամկետների կրկնապատիկը: Քրեական հետապնդման ժամկետը կասեցվում է մինչև դրա համար հիմք ծառայած հանգամանքների վերանալը, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր: Տվյալ պարագայում քրեական հետապնդման ժամկետի կասեցումը դադարեցվում է

[1] Տե՛ս նույն տեղում, 193-րդ հոդվածի 2-րդ մաս:

մինչև համագործակցությունը դադարեցնելը կամ մինչև մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելը:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումն ընդունվում է մեղադրյալի բացակայությամբ հնարավոր և անհրաժեշտ բոլոր վարութային գործողությունները կատարելուց հետո, սակայն չի սահմանափակում նախաքննության ընթացքում վարութային այլ գործողությունների կատարումը, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է քրեական հետապնդման ժամկետը կասեցնելուց հետո[1]: Այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք քրեական հետապնդման ժամկետի կասեցման ընթացքում ձեռք բերված ապացույցները թույլատրելի են, թե ոչ: Օրենսդիրը շահագրգիռ անձանց հնարավորություն է ընձեռել հետագայում այդ ապացույցների թույլատրելիությունը վիճարկել[2]:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին միջնորդությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին: Հսկող դատախազը միջնորդությունն ստանալու պահից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում որոշում է կայացնում քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին կամ որոշմամբ մերժում է միջնորդությունը: Այդ որոշումներն անհապաղ ուղարկվում են քննիչին: Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումն ստանալուց հետո քննիչը դրա պատճեններն անհապաղ հանձնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց գրավոր պարզաբանելով որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական հետապնդման ժամկետի կասեցումը կարող է խախտել որոշակի անձանց (օրինակ՝ մեղադրյալի) իրավունքները և օրինական շահերը՝ օրենսդիրը սահմանել է նաև շահագրգիռ անձի կողմից հսկող դատախազի որոշման բողոքարկման հնարավորությունը՝ ինչպես վերադաս դատախազին, այնպես էլ դատական կարգով: Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում: Վերադաս դատախազը բողոքը ստանալու պահից 15-օրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին[3]:

[1] Տե՛ս նույն տեղում, 194-րդ հոդված:
[2] Տե՛ս նույն տեղում, 97-րդ, 320-րդ և 335-րդ հոդվածներ:
[3] Տե՛ս նույն տեղում, 194-րդ հոդվածի 4-րդ մաս, 299-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

Քրեական հետապնդման նման ոչ ճկուն ժամկետների սահմանումը գործնականում կհանգեցնի նրան, որ վարույթն իրականացնող մարմիններն արհեստականորեն կարող են ձգձգել անձին մեղադրյալի կարգավիճակ տալը, որպեսզի քրեական հետապնդման ժամկետները չհոսեն: Չեն բացառվի իրավիճակներ, որ քրեական հետապնդման մարմինները նախաքննություն կատարելու առավել երկար ժամկետներ ունենալու նպատակով անձին կարող են մեղադրանք առաջադրել առավել ծանր հոդվածով, որոնց համար նախատեսված են քրեական հետապնդման առավել երկար ժամկետներ:

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ ներպետական և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դատական նախադեպերի, որոնք վերաբերելի են ուսումնասիրվող թեմային, հատկապես՝ անձի նկատմամբ իրականացվող փաստացի քրեական հետապնդմանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանը ***Գագիկ Միքայելյանի*** գործով արտահայտված իրավական դիրքորոշմամբ հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Մասնավորապես, **«քրեական մեղադրանք»** հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium) գործով վճիռ, 1980 թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44)[1]: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ***«ողջամիտ ժամկետը» սկսվում է անձին «մեղադրանք առաջադրելու» պահից***, դա կարող է տեղի ունենալ գործն առաջին ատյանի դատարան ուղարկելուն նախորդող օրը, օրինակ՝ ձերբակալման օրը, այն օրը, երբ շահագրգիռ անձը պաշտոնապես ծանուցվել է նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին, կամ այն օրը, երբ սկսվել է նախաքննությունը: Այսինքն, անձի նկատմամբ «**մեղադրանքի**» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ***ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն***, ինչպես նաև ***էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա[2]:***

Վճռաբեկ դատարանը ***Նորիկ Պողոսյանի*** գործով կայացված որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ն. Պողոսյանն ապօրինի

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գագիկ Միքայելյանի* գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 21-րդ կետը:

[2] Տե՛ս ՄԻԵԴ-ի *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982 թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007 թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004 թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98:

թմրամիջոց է իրացրել, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն. Պողոսյանին մերկացնող հարցեր[1]:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներով արձանագրել է, որ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է, այն նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք է: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքելու իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է՝ դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու[2]:

Վճռաբեկ դատարանն ***Արտակ Վարոսյանի*** գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ փաստացի քրեական հետապնդման ներքո գտնվող անձին կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերելի իրավունքների մասին ծանուցելը վերջինիս դե յուրե կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նորիկ Պողոսյանի* գործով 2010 թ. մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշման 21-րդ կետը:

[2] Տե՛ս *Նորիկ Պողոսյանի* գործով 2010 թ. մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշման 25-րդ կետ, *Հեղինե Գալստյանի* գործով 2015 թ. հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետ, Հայկ Սիմոնյանի գործով 2017 թ. օգոստոսի 30-ի թիվ ԵԱԴԴ/0027/01/15 որոշման 13-րդ կետ, *Արթուր Մամաջանյանի* գործով 2017 թ. նոյեմբեր 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշման 21-րդ կետ:

կարգավիճակ շնորհելու ընթացակարգ չի ենթադրում[1]: Դա կոչված է ապահովելու, մասնավորապես հարցաքննության պարագայում, մերկացնող հարցեր տալու և դրանով իսկ փաստացի քրեական հետապնդում իրականացնելու մասին պատշաճ ծանուցումը և կոնկրետ քննչական գործողության ընթացքում, անկախ դե յուրե կարգավիճակից, կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքից բխող դատավարական երաշխիքներից օգտվելու հնարավորության ընձեռումը:

Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ Օրենսգրքի համաձայն՝ կախված անձին վերագրվող հանցանքի աստիճանից, քրեական վարույթի համար սահմանվում է վերջնաժամկետ (եթե քրեական վարույթում կա մեղադրյալ, այսինքն հարուցված է քրեական հետապնդում), որի ավարտից հետո քրեական գործը կա՛մ պետք է ուղարկվի դատարան, կա՛մ էլ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման: Մինչև վարույթում մեղադրյալին ներգրավելը գործը կարող է քննվել առանց ժամկետի սահմանափակման, սակայն երբ հայտնվում է մեղադրյալը, սկսում է գործել Օրենսգրքով սահմանված ժամկետների ընթացքը: Այս ամենի նպատակն այն է, որ անհիմն չսահմանափակվեն մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները և մեղադրյալի կարգավիճակով անձը երկար ժամանակ չմնա: Օրենսդրորեն նման ամրագրումը նպաստել է և ծառայելու է որպես մեղադրյալի ողջամիտ ժամկետի իրավունքի երաշխիք:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրենք, որ պրակտիկայում առաջանում է այնպիսի խնդիր, երբ փաստացի քրեական հետապնդում լինում է, սակայն մեղադրանք չի առաջադրվում, այսինքն քրեական հետապնդում չի հարուցվում, որպեսզի քրեական հետապնդման քրեադատավարական ժամկետների սահմանափակումը հաղթահարվի ու ժամկետների ընթացքն ավելի ուշ սկսվի: Վերոնշյալ հիմնախնդրի լուծման համար Վճռաբեկ դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո առաջարկում ենք, որ եթե անձի նկատմամբ փաստացի առկա է քրեական հետապնդում, ապա ժամկետների հաշվարկը պետք է կատարել փաստացի կասկածի օրվանից: Վերոնշյալը հիմնավորում ենք նրանով, որ Եվրոպական դատարանը հստակ սահմանել է, որ իրավունքը պետք է լինի իրական և գործնականում կիրառվի, այդ իսկ պատճառով պետք է կիրառվի փաստացի քրեական հետապնդման կարգավորումը: Եթե կա

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արտակ Վարոսյանի* գործով 2024 թ. ապրիլի 15-ի թիվ ԵԴ/0009/11/20 գործով կայացված որոշման 14-րդ կետը:

փաստացի կասկած, որի մասին անձը պատշաճ տեղեկացել է, ապա քրեական հետապնդումը պետք է գործի այդ օրվանից:

Մյուս կողմից, երբ առկա է փաստացի կասկած, սակայն անձը չի տեղեկացվել դրա մասին վարույթն իրականացնող մարմնի կողմից, ապա ժամկետի սկիզբը ևս պետք է համարվի փաստացի կասկածի օրը, այսինքն այն օրը, երբ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր հայտնել: Այս իրավական խնդրին օրենսդիրն արդեն իսկ անդրադարձել է Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, այն է՝ Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, որի նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու: Օրենսդիրը միայն ապացուցման իրավունքի շրջանակներում է անդրադարձել վերոնշյալ խնդրին, սակայն այն պետք է գործի նաև քրեական հետապնդման ժամկետների դեպքում: Առաջարկում ենք, որ ժամկետի հաշվարկը կատարվի առավելագույնի սկզբունքով, այսինքն փաստացի կասկածի օրվանից, երբ անձը տեղյակ չէ դրա մասին՝ սկսի հոսել առանձնապես ծանր հանցագործության համար սահմանված առավելագույն՝ 10 ամիսը: Վերոնշյալ փոփոխությունները կարող են կատարվել ինչպես օրենսդրական լրացում կատարելով, այնպես էլ նախադեպային իրավունք ձևավորելով:

Կարծում ենք նաև, որ քննարկվող ինստիտուտի ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումներում կարելի է նախատեսել քրեական հետապնդման ժամկետի երկարաձգման այլ կառուցակարգ: Առաջարկում ենք Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ կերպ.

«Բացառիկ դեպքերում, վարույթի բարդությունից և երբ դա է պահանջում արդարադատության շահը, վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 2 ամսով»:

Ընդ որում, ժամկետի երկարաձգումը չպետք է կախված լինի անձին վերագրվող հանցանքի ծանրությունից, այլ վարույթի բարդությունից, ինչպես նաև այլ բացառիկ հանգամանքներով պայմանավորված: Սա թույլ կտա մի կողմից զերծ մնալ վարույթն իրականացնող մարմինների կամայականություններից ու չարաշահումներից՝ ապահովելով մեղադրյալի ողջամիտ ժամկետի իրավունքը, իսկ մյուս կողմից կապահովի վարույթի բնականոն ընթացքն ու արդյունավետությունը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
2. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=200673
3. *Գագիկ Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում:
4. *Նորիկ Պողոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշում:
5. *Հեղինե Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշում:
6. *Հայկ Սիմոնյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԴԴ/0027/01/15 որոշում:
7. *Արթուր Մամաջանյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբեր 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշում:
8. *Արտակ Վարոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ԵԴ/0009/11/20 որոշում:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982 թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78:
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007 թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04:
11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004 թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97:
12. **Ղամբարյան Ա.Ս.,** Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): ՀՀ Քննչական կոմիտե 2016, էջ 29:

СРОКИ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ КАК ГАРАНТИЯ ПРАВА ОБВИНЯЕМОГО НА РАЗУМНЫЙ СРОК ПРЕСЛЕДОВАНИЯ

Аннотация

С принятием нового Уголовно-процессуального кодекса РА некоторые уголовно-процессуальные институты претерпели ряд существенных изменений, которые явились следствием совершенствования общественных отношений и законодательства в данной сфере. Претерпел изменения и институт уголовного преследования. Законодатель закрепил сроки привлечения к уголовной ответственности, их приостановление, а также возобновление уголовного преследования, являющиеся новшеством в отечественном уголовно-процессуальном законодательстве. Впервые в законодательстве были определены максимальные сроки уголовного преследования в зависимости от характера и тяжести данного расследуемого преступления. В данной работе подробно изучены сроки уголовного преследования как гарантия обеспечения права обвиняемого на разумный срок. В результате исследований и анализов были выделены проблемы, возникающие в юридической практике, и внесены предложения по восполнению законодательных пробелов.

На практике возникает такая проблема, что уголовное преследование по факту есть, однако в целях более позднего начала исчисления уголовно-процессуальных сроков уголовного преследования обвинение не предъявляется, то есть уголовное преследование не возбуждается. Для решения вышеуказанной проблемы мы предложили, чтобы в случае наличия в отношении лица уголовного преследования исчисление сроков начиналось с даты возникновения фактического подозрения.

Ключевые слова: уголовное преследование, сроки уголовного преследования, разумный срок, обвиняемый, прекращение уголовного преследования, прокурор, уголовное производство.

TERMS OF CRIMINAL PROSECUTION AS A GUARANTEE OF THE RIGHT OF THE ACCUSED TO A REASONABLE PERIOD OF PROSECUTION

Annotation

With the adoption of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, some criminal procedure institutions have undergone a number of significant changes, which were the result of improvements in public relations and legislation in this area. The institution of criminal prosecution has also undergone changes. The legislator established the terms for bringing persons to criminal responsibility, their suspension, and the resumption of criminal prosecution, which are an innovation in domestic criminal procedure legislation. For the first time, the legislation defined maximum terms for criminal prosecution, depending on the nature and severity of the crime under investigation. In this paper, the terms of criminal prosecution are studied in detail as a guarantee of a reasonable time for the accused. As a result of research and analysis, problems that arise in legal practice were identified, and proposals were made to fill the legislative gaps.

In practice, there is a problem where criminal prosecution exists in fact, but for the purpose of delaying the start of the criminal procedural period of criminal prosecution, no charge is brought; that is, no criminal prosecution is initiated. To solve the above problem, we proposed that if there is actually a criminal prosecution against a person, then the calculation of terms should begin from the date the actual suspicion arose.

Keywords: criminal prosecution, terms of criminal prosecution, reasonable time, accused, termination of criminal prosecution, prosecutor, criminal proceedings.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.08.2025 թ., տրվել է գրախոսության 10.08.2025 թ., ընդունվել է տպագրության 20.08.2025 թ.: